

առանձնը կ'վերադարձուէին: Նոր օրէնքը զինուորագրութեան թիւն ամբողջ Ռուսիոյ համար կ'սահմանէ և ո՛ր թէ իւրաքանչիւր նահանգի, նոր տրամադրութիւններով սկսականները չեն առնուիր, վասն զի զինուորագրութեան աստի նոր զօրքերուն հարիւրին 47 միայն կ'առնուի, և այն ալ անոնցմէ որ զինուորական ծառայութենէ զերծ մնալու ո՛ւնէ պատճառ չունին: Ինչպէս կ'երևայ, Ռուսիա անազնի աղբիւրներ ունի զինուորագրութեան համար և եթէ Ռուս կառավարութիւնը զործադրէ զօրքարանակներու աւելցնելու մտադրութիւնը, նոր զինուորներու համար ներդուրիւն պիտի չգալէ: Լեւոնաբար հաւատարի չեն նկատուիր այն զորոյնները թէ ռուս կառավարութիւնը, ի զլուխ ունենալով Մ. Բոքովցեկը, մասամբ փոխած ըլլալ իր կարծիքը զինուորագրութեան մասին:

ՀԱՅ-ԱՋԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱՋԳԱՅԻՆ ՏՈՆ

Հայ գրերու զիւտին 1500 ամեակը և Հայ ազգագրութեան սկզբնաւորութեան շրթքարեան Յորելանք որ պիտի կատարուի Հոկտ. 13ին մայրաքաղաքիս մէջ, մտասաներորդ ժամուն ուշադրութեան առնուեցաւ և թաղերու մէջ հանդէսներ կ'կազմակերպուին, առանց սակայն այդ երկու մեծ տօները յաւերճացնելու համար դիմադրութիւն միջոց մը մտածելու և լոկ խօսքի ու բառի սպառման առիթ դարձնելու համար, մինչ մեր Ռուսաստանի եղբայրները հակայական եռանդով մը ցոյց կուտայ զործին իրական մեծութեան ըմբռնողութիւնը և Համազգային այս մեծ տօնը իրապէս յիշատակելի գումարով մը կ'յաւերճացնեն և կ'անմահացնեն:

Ամենայն Հայոց կաթողիկոսի առաջարկով Ռուս կառավարութիւնը արտօնած էր, մէկ տարի ամբողջ, 1913 Մարտէն սկսեալ մինչև 1914 Մարտ, բովանդակ Ռուսաստանի մէջ հանգանակութիւն կատարել, կազմելու համար անձնակազմի զբաժանուի մը Հայ վարժարաններուն համար:

Այս հանգանակութիւնը, որուն մասնակցելու հրաւեր եղած էր նաև թուրքիոյ Հայոց, դեռ ո՛ւնէ արձագանգ չէ գտած, բաց ի ճանի մը ազգային գաղափարներով խանդավառուած զորանորներու լուծայէն, որ իր յաջորդը չունեցաւ և որ 2/3 ոսկիէն աւելի չէ դժբախտաբար Այս ողորմելի գումարին դէմ, Ռուսաստանի մէջ հանգանակուած է մինչև հիմա 800,000 ռուպլի և շատ հաւանական է որ ժողովրդէն հասնի այդ գումարը մէկ միլիոն ռուպլէ: (2/3 միլիոն ֆր. մատաւորապէս) Այս գումարին 600,000ը պիտի յատկանայ Ղարաբաղի թեմական շրջաններու և Եւրոպիայի Մարիամեան Օրհորդական դպրոցին, վասն զի հանգանակուած է այդ վարժարաններուն Դժամակին աւելի, ընդհանուր դպրոցական ֆոնդին մաս կազմելու նպատակով: Պետարապոյթի թեմը, և զխաւորապէս Նոր-Նախիճեան իր նուէրներով և Ս. Երզնկեանի կտակով կուտայ 200,000 ռուպլի: Տակաւին կողման և Ռուսաստանի միւս քաղաքներու մէջ հանգանակութեան չէ ձեռնարկուած եւ շատ հաւանական է որ անկատարուածէն աւելի յաջողութիւն ունենայ և անցին նոյն իսկ ներառուած մէկ միլիոն ռուպլին:

Պ. Հ. Առաքելեան Մշակի (Թ. 205) մէկ խմբագրականին մէջ կ'ըսէ թէ անցեալ Հոկտեմբերին երբ այս գաղափարը յղարկուեցաւ և Ամենայն Հայոց կաթողիկոսը իր որոշումը կոնքուզով մը հաղորդեց թուրք թեմերուն, հազիւ յոյս կար թէ 20-300 հազար ռուպլի կարելի պիտի ըլլար հանգանակել, մինչ հիմա կը տեսնուի թէ Ռուսաստանի Հայերը թեմերուս միջավայրի աղքատութեամբ և Հայերեն քաղաքապետին մտատարութեան աղքատութեամբ աւելի տաք սիրտ մը ունին Ազգային, Հայ ընդունին, Հայ քրականութեան, վերջնապէս մէկ խօսքով բոլոր այն բաներուն համար որոնք Հայեցի են ու Ազգային: Եթէ նիթական աննպաստ պարագաներ զմեզ կ'ընթացան և այս պիտի ըլլայ մեր արդարացումը, ասիկա արարացում մը չէ, զի համատեմ ժողովներով ալ կրնանք մասնակցել իր արդիւնուն: Ընդհանր գաղափարը ընդգրկելու իրապէս է և այդ մասին տեսնուածը լոկ ըրածքի առեւտուր մըն է, ան ալ մետասաներորդ ժամուն խորուած:

Ամենայն Հայոց կաթողիկոսը, թիֆլիսի մէջ կազմուած երկու անկաստան յանձնաժողովները միանգամայն վաւերացած ըլլալուն համար, Լէօի նախագահութեան տակ գտնուած և առաւելապէս Հորիզոնականներէ բաղկացած յանձնաժողովը, որ ինչքանքը թեմական յանձնաժողով կ'կոչէր, վերջին պահուն հրաժարուած է, իբր թէ երկպառակութիւն առաջ չբերելու համար վսեմ գործի մը չուրջը: Այս հրաժարականին գաղափարը սակայն ալիւր պէտք է փնտռել ճան թէ չերկպառակելու վարը, որ շատ վերջին րոպէին տատուած հոգաւորութիւն մը կ'թոյնի, ճանի ու մատաւորապէս 1912 Մարտէն ի վեր է որ այս երկպառակութիւնը գոտիութիւն ունէր և երբեք այս տեսակ զեղեքներով մտածութիւն մը չէին ունեցած յանձնաժողովին անդամները:

Այս հրաժարականին զխաւոր շարժանիսն ուրիշ բան չէր, եթէ ոչ Պէտրքեւի այն կտրագործութիւնը, որ Տիֆլիսի երկու յանձնաժողովները կ'ուսերացնէր, միակ պայմանով մը որ, անոնք հանգանակութեան կատարին ի նպաստ դպրոցական ֆոնդին, մինչ Հորիզոնականները կ'ուզէին որ իրենք յանձնաժողովը վաւերանար իր հաւաքած զբաժնէ Հայ գրողներու ընկերութեան արամադրելի ընելու պայմանով: Տիֆլիսի մէջ հիմա կ'մտայ մէկ յանձնաժողով, որ պարտքի յանձնաժողով անունով ծանօթ է և Մշակականներէ կը բաղկանայ մեծ մասամբ և կ'զանուի Պ.

Հ. Առաքելեանի նախագահութեան տակ Այս յանձնաժողովը, միւսն հրաժարելէ յետոյ թեմակազմի Ս. Մետրովայ Ս. Մովսէսեանը հրաւիրած է սասնակել իր նախագահութիւնը, ճանի որ կաթողիկոսն վաւերացած մարմին մ'էր ինքը Ս. Մետրովայ Ս. Մովսէսեան մերժած ըլլալով, այս յանձնաժողովին համար կ'ըսուի թէ իբր բողոքի ցոյց չկ'մտածէ ինքն ալ հրաժարել, սակայն դեռ այս մասին ո՛ւնէ որոշում չկայ:

Վարչութիւնը գտած նոր անդամներ աւելցնելու մտքը զիւտի նախընտրելի տեղի ունենալով կարգադրութեամբ գրադելու համար կազմուած մարմին մը, որ այսօր նիստ ընելու հրաւիրուած է Պատրիարքարան: Նոր անդամներու մէջ կ'զատուին Հայ Հռոմականներէն Փանջիկեան և Առաւելեան Վ. ներքը, իսկ Հայ Աւետարանականներէ Ա. Եմանեան և Գ. Իսկ աւելցած են նաև Ս. Սեդիկ Արքեպիսկոպոս, Տեառք Տոքթ. Վ. Թորգոման, Սոսոսերեան, Զարդարեան, Ե. Պրոպէրեան, Թէոդիկ, Տ. Զեօկիւրեան, Ամեն թաղ իր մէջ պատրաստութիւն կ'տեսնէ արդէն այս հանդէսը կատարելու պատշաճ հանդիսաւորութեամբ:

Ազգ. շրջանակներու մէջ կ'առաջարկուի հոկտ. 12ը շարժաթ օրը Մայր Եկեղեցոյ մէջ մատուցուելիք պատարագէն յետոյ, Մայր Եկեղեցոյ մէջ գումարով Ազգ. ժողովը և նոր հանդիսաւորապէս բացուած հոգակի կրթական ֆոնդը, հետզհետէ շարունակուելու համար ինչպէս էլ միտածնէ մեզ հասած թղթակցութեան մէջ գրուած էր, Ս. Հայրապետ Էջմիածին ձեռնադրած եպիսկոպոսներուն քսած էր արդէն որ կրթական ֆոնդին մէջ բաժին ունենալու համար հարկ է նաև թուրքիոյ Հայոց մասնակցութիւնը, հետեւաբար կատարուելիք հանդէսներէն աւելի կարեւորութիւն ունի այս պարագան որ կ'յանձնենք մասնաւորապէս Ազգ. մարմիններու ուշադրութեան:

Հայ-Բուշուլու հարաբերութիւնը և Պարթիզանութիւնը. — Հայ-Բողոքականաց ազգապետ Եսկոր Է. Պոյաճեան, որ երկար տարիներէ ի վեր կ'պաշտօնավարէ, միշտ նախանձախնայելի զանուկով պետք գտնուած իր հասարակութեան կապը անխախտ պահելու ազգին մեծագոյն և զխաւոր մասին նաև, Սահմանադրութեան հրատարակութեան յետոյ հրաժարեցաւ, որովհետև հասարակութեան մէկ մասը կ'կարծէր թէ երկրին մէջ գործուելու թեման նոր դարապետ մը բացուած ըլլալով, իր յառաջացած տարիքը արդէն է զլուխ հանելու կարգ մը կարեւոր գործեր, որոնք կարգէն է նաև հասարակութեան համար ուրոյն կանոնագրի մը պատրաստութեան և Պետութենէ վաւերացման, ինչպէս նաև Ազգապետարանի կազմակերպութեան խնդիրը: Հասարակութեան այն մասը որ կ'պիտիւր այս պետքին վրայ, մինչև իսկ ազգային նոր ընտրութիւն մ'ալ կատարեց, լայն այս ընտրութեան հասարակութեան զըլխաւոր անդամները մասնակցած ըլլալով և ընտրութեան օրինաւորութեան մասին առաքելութիւններ ըլլալով, չվաւերացան կառավարութեան կողմէ, ու Պոյաճեան Է. Պ. շարունակեց վարել հասարակութեան գործերն առժամապէս ու հրաժարեալ վիճակի մէջ: Եւ արդէն նոյն միջոցին հասկցուած էր որ թուրքիոյ մէջ եղած փոփոխութիւնը հասարակութեան ակնկալութիւններն իրագործելու բաւական չէին, և հետեւաբար ազգապետի փոփոխութեան խնդիրն առժամապէս մէկ կողմ դրուեցաւ: Վերջին օրերս Հայ-բողոքական հասարակութեան մէկ մասին մէջ գաղափար մը յառաջ եկած է, որ Հայ-բողոքական հասարակութեան կառավարութեան նաև ունեցած վարչական գործերուն համար միայն փոխադրուելու յարմարութիւն ունենալու Ազգ. Պատրիարքարանի միջոցաւ կատարուին այդ գոտ վարչական գործերը, հասարակութեան ազատ ձեռքով իր դաւանական և հոգեւոր բոլոր խնդիրներուն և ներքին կազմակերպութեան մէջ: Այս առաջարկին իրեն գաղափարակիցներն և համախոհներն ունենալով, որոշուած է վաղը առաւօտ խուփ մը ազգային երեսփոխաններու և Հայ-բողոքական զխաւոր անդամներու միջև կարծիքի փոխանակութիւն մը կատարել այս խնդրոյն շուրջ, և եթէ կարելի է աւելի մերձեցման կապ մը ստեղծել այս կերպով, հաւատարմ խնդիր վերաբերեալ հարկ խնդիրներու մէջ ազատ ձեռքով հասարակութեան մէն մի անդամը: Այս նպատակով հրաւերներ ուղղուած են արդէն վաղուան համար:

Հարկ չկայ ըսելու թէ Ազգը՝ հայ բողոքականաց կողմէ կրթական և բարեգործական ձեռնարկներու նուիրուած մասնակցութեանն որքան օգտուեցաւ և իբրև շոյափելի արդիւնք, զառաւելու կրթական գործը միացնելու ձգտումներ և փոփոխութեան նկատման կ'ուսումն և Ամերիկայի մէջ Հայ ու Հայ բողոքական միասին կ'աշխատան այս նպատակներու շուրջ, այնպէս որ դասնական տարբերութիւններ այլևս իրենք չնին թափեր կորսնցուցած են ու Հայ եկեղեցականներ կ'երեւին ու կ'զարթեցն բողոքական բեմերու վրայ և բողոքական զարգացման իրօսին նոյնպէս Հայ եկեղեցիներու մէջ: Իսկ կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին ի Մարաշ Հայ բողոքականաց ժողովարանին մէջ ներկայութիւնն ու խօսած զարգը՝ ամենէն ցայտուն օրինակն է թէ Հայ բարձրաստիճան եկեղեցականութիւնը ինչ կը մտածէ այսօր Հայ բողոքականներու մասին: Այս վերաբերումը՝ կ'կարծենք թէ Հայ բողոքականաց ամենէն ջերմ հաւատացեալ դասակարգէ իսկ բուսական է լուսաբանութեան թէ Հայ Եկեղեցին չուզան իր անհատիկ հաւատքը իր խղճի խնդիրը կ'նկատէ: Ծարխներու ըն-